ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

ՀՀ ԳՄ ԶՀ-ԳՀԱՇՁԲ-21/02 ծածկագրով գնանշման հարցման հայտերի գնահատման նիստի

գ. Զոլաքար **«11» «08» 2021թ.**
ժ 14:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ Գ. Մխիթարյան
Հանձնաժողովի անդամներ Պ. Սարիբեկյան, Լ. Գրիգորյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ժ. Խաչատրյան

ՀՀ ԳՄ ԶՀ-ԳՀԱՇՁԲ-21/02 ծածկագրով գնանշման հարցման հանձնաժողովի նիստի օրակարգ

1. Մասնակիցների հետ գների նվազեցման շուրջ կազմակերպվող բանակցությունների վարում:
2. Բանակցությունների արդյունքում և ներկայացված գնային առաջարկի հիման վրա գնման ընթացակարգի ընտրված մասնակիցներ ճանաչելու մասին որոշման ընդունում:
3. Անգործության ժամկետի վերաբերյալ որոշման ընդունում:
4. Հանձնաժողովի հաջորդ նիստի օրվա , ժամի և վայրի մասին որոշման ընդունում:

1. Գների նվազեցման շուրջ կազմակերպվող բանակցությունների վարում մասնակիցների հետ.

1. Քանի որ գնումն իրականացվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի և «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ մասի դրույթների հիման վրա, ուստի գնահատող հանձնաժողովի քարտուղարը 2021 թվականի օգոստոսի 05-ին էլեկտրոնային եղանակով ծանուցել էր բոլոր մասնակիցներին՝ 11.08.2021թ.-ին ժամը 14-00-ին գների նվազեցման շուրջ կազմակերպվող միաժամանակյա բանակցություններին մասնակցելու վերաբերյալ:

Գների նվազեցման շուրջ կազմակերպվող միաժամանակյա բանակցություններին ներկայացել էր միայն «ՆԱՆԵ-ՇԱՔԵ» ՍՊԸ-ն, որը վերանայեց իր կողմից հայտով ներկայացրած գնային առաջարկը /կցվում է/, իսկ մյուս մասնակիցները չէին ներկայացել բանակցություններին: Ստորև ներկայացվում է մասնակիցների կողմից ներկայացված վերջնական գնային առաջարկները:

Զոլաքար համայնքի ներհամայնքային փողոցների լուսավորության ցանցի կառուցման աշխատանքներ

ՀՀ	Կազմակերպության անվանումը	Նախահաշվային գինը	Արժեք	ԱԱՀ**	Ընդհանուր գինը
1	«ՆԱՆԵ-ՇԱՔԵ» ՍՊԸ	22486170	15749000	-	15749000
2	«Ույուտ Սենթր» ՍՊԸ		15750000	3150000	18900000
3	«Սաշիկ և Սևակ եղբայրներ» ՍՊԸ		16250000	3250000	19500000
4	«Սուսմետ» ՍՊԸ		18400000	3680000	22080000
5	«Էներգացանցշին» ՍՊԸ		18749448	3749890	22499338
6	«ԷՅԷՄ ՇԻՆ» ՍՊԸ		22100000	-	22100000
7	«ՇԻՆ-ԳՐՈՒՊ» ՍՊԸ		22482044	-	22482044
8	«ՇԻՆ-ԿՈՄՊԼԵՔՍ» ՍՊԸ		24000000	4800000	28800000

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

2. Ներկայացրած գնային առաջարկի հիման վրա ընտրված մասնակիցներ ճանաչելու մասին որոշման ընդունում.

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ մասի դրույթներով՝ որպես բավարար գնահատված և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից՝ գնահատող հանձնաժողովը որոշեց.

- «ՆԱՆԵ-ՇԱՔԵ» ՍՊԸ-ին ճանաչել ընտրված մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

3. Անգործության ժամկետի վերաբերյալ որոշման ընդունում.

3. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ գնման ընթացակարգին հայտ է ներկայացրել մեկից ավելի մասնակից, ուստի հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի պահանջները՝ հրապարակել հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին, անգործության ժամկետ սահմանելով սույն հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվելու գործընթաց սկսել սույն հայտարարությամբ սահմանված անգործության ժամկետի ավարտից՝ 17.08.2021թ. հետո:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

4.Հանձնաժողովի հաջորդ նիստի օրվա , ժամի և վայրի մասին որոշման ընդունում.

4. Գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու օրը, ժամը 12:00-ին, ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ. Զոլաքար, 2-րդ փողոց, շենք 17 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Նախագահ՝ _____ Գ. Մխիթարյան

Անդամներ՝ _____ Պ. Սարիբեկյան

_____ Լ. Գրիգորյան

Քարտուղար՝ _____ Ժ. Խաչատրյան